VOLUNTARY RETURN

Ցանկանում եք Ձեր երկի՞ր վերադառնալ: Մենք կարող ենք օգնել Ձեզ:

0800 32 745 (free number)
www.voluntaryreturn.be

Discover the return stories on
www.vrijwilligeterugkeer.be/en-gb/stories

fedasil
FEDERAL AGENCY FOR THE RECEPTION OF ASYLUM SEEKERS

ibz

Co-funded by the European Union

1 Ինչպե՞ս կարող եմ իմ երկիր վերադառնալ:

Դուք միշտ էլ կարող եք Ձեր երկիր վերադառնալու որոշում կայացնել: Դուք կկազմակերպեք ուղևորությունը և կհոգաք նրա ծախսերը: Եթե չունեք դրա հնարավորությունը, մենք կարող ենք միասին պարզել, թե արդյո՞ք կարող եք կամավոր վերադարձի ծրագրի միջոցով օժանդակություն ստանալ:

2 Ի՞նչ է ինքնուրույն վերադարձը:

Բելգիայում առանց պատշաճ փաստաթղթերի մնալու դեպքում Դուք ստիպված կլինեք վերադառնալ Ձեր սեփական միջոցներով: Մենք դա կոչում ենք ինքնուրույն վերադարձ: Դուք ի վիճակի չե՞ք դա ինքնուրույն անել: Դիմեք մեզ, և մենք միասին կպարզենք Ձեզ կամավոր վերադարձի ծրագրի միջոցով օժանդակելու հնարավորությունը:

3 Ի՞նչ է կամավոր վերադարձը:

Վերադարձ Ձեր երկիր, ուր Դուք որոշել եք վերադառնալ: Եթե Դուք վերադարձի համար օժանդակության կարիք ունեք, ապա կարող եք դիմել մեզ և պարզել առկա հնարավորությունները:

4 Ո՞ւր կարող եմ գնալ:

Ամենապարզ տարբերակը Ձեր երկիր վերադառնալն է: Դուք նաև կարող եք մեկնել այլ երկիր, բայց միայն այն դեպքում, եթե ունեք այնտեղ մուտք գործելու համար վավեր փաստաթղթեր և այս երկիր վերադառնալու վավեր թույլտվություն:

5 Ի՞նչ է վերադարձի որոշումը:

«Վերադարձի որոշումը» կամ «տարածքը լքելու կարգադրությունը» փաստաթուղթ է, որում նշված է այն ժամանակահատվածը, որի ընթացքում Դուք պետք է հեռանաք Բելգիայից:

6 Ինչպե՞ս կարող եմ դիմել կամավոր վերադարձի համար:

Դիմեք Բելգիայում գտնվող գրասենյակներից կամ կազմակերպություններից մեկին, զրուցեք սոցիալական ծառայության աշխատակցի հետ կամ զանգահարեք 0800 327 45 անվճար հեռախոսահամարով: Ձեր դիմելուն պես մենք նախ կստուգենք Ձեր համապատասխանությունը կամավոր վերադարձին օժանդակության մասով:

7 Ո՞վ է կազմակերպելու իմ կամավոր վերադարձը:

Կամավոր վերադարձի ծրագիրը կարող է Ձեզ մեկ անգամ օգնել վերադառնալ: Օդանավով կամ ավտոբուսով վերադարձի ուղևորությունը կազմակերպվում է Միգրացիայի միջազգային կազմակերպության (IOM) հետ համատեղ: IOM-ը, Caritas International-ը կամ այլ գործընկեր կազմակերպությունը Ձեզ աջակցություն կցուցաբերի Ձեր երկիր ժամանելուց հետո:

8 Ես պե՞տք է որևէ վճարում կատարեմ:

Ոչ: Եթե Դուք ենթակա եք կամավոր վերադարձին օժանդակություն ստանալու, ապա Ձեր օդանավի կամ ավտոբուսի տոմսի և օդանավակայան կամ երկաթուղային կայարան փոխադրման համար կվճարվի: Դուք պետք է Ձեր երկրի դեսպանատնից ինքներդ ստանաք Ձեր ճանապարհորդական փաստաթղթերը: Այդ ծախսերը Ձեզ կփոխհատուցվեն նախքան մեկնումը: Եթե Դուք ենթակա չեք կամավոր վերադարձին օժանդակություն ստանալու, ապա պետք է ինքներդ վճարեք Ձեր ուղևորության համար:

9 Որտեղի՞ց կարող եմ ձեռք բերել անհրաժեշտ ճանապարհորդական փաստաթղթերը:

Եթե չունեք Ձեր երկիր վերադառնալու համար անհրաժեշտ՝ անձը հաստատող փաստաթղթեր, Դուք պետք է այցելեք Ձեր երկրի դեսպանատուն: Դեսպանատունը կարող է Ձեզ անձնագիր կամ ճանապարհորդական փաստաթուղթ տրամադրել: Եթե խնդիրներ ունենաք, մենք կարող ենք օգնել:

10 Որքա՞ն ուղեբեռ կարող եմ վերցնել:

Այս դեպքում գործում են ավիաուղիների կամ ավտոբուսային ընկերության կողմից ուղեբեռի մասով սահմանված կանոնները. Դուք չպետք է գերազանցեք առավելագույն քանակը և զանգվածը: Ուստի հավաստիացեք, որ Ձեր ուղեբեռը չափազանց ծավալուն չէ

11 Ինձ կուղեկցե՞ն վերադարձի ճանապարհին:

Այս դեպքում գործում են ավիաուղիների կամ ավտոբուսային ընկերության կողմից ուղեբեռի մասով սահմանված կանոնները. Դուք չպետք է գերազանցեք առավելագույն քանակը և զանգվածը: Ուստի հավաստիացեք, որ Ձեր ուղեբեռը չափազանց ծավալուն չէ՛:

12 Իմ երկրում կյանքը հեշտ չէ: Ի՞նչ օժանդակություն կարող եմ ակնկալել:

Մենք աշխատում ենք Ձեր հայրենի երկրում գտնվող տեղական գործընկերների հետ, որոնք կարող են Ձեզ օգնել Ձեր երկրում վերաինտեգրվելու գործում: Օրինակ՝ նրանք կարող են Ձեզ օգնել, որպեսզի ստեղծեք սեփական բիզնես, վճարեք բուժման ծախսերը կամ աշխատանք գտնեք: Նման օգնություն ոչ բոլորն են ստանում, քանի որ յուրաքանչյուր իրավիճակ առանձնահատուկ է:



This brochure is intended for foreigners without a residence permit in Belgium. It is available in 15 languages: Albanian, Arabic Armenian, Dari, Dutch, English, French, Georgian, Mongolian, Pashto, Portuguese, Russian, Serbian, Spanish and Turkish. You can download the different language versions on www.retourvolontaire.be/en-gb/partners.

CONTACT US.

www.voluntaryreturn.be/contact-us